CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ԼՂ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2024

CENTER FOR CONSTITUTIONAL STUDIES,
LEGISLATIVE DEVELOPMENT AND REFORM MONITORING

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Պետական նպաստներ, որոնցից կարող են օգտվել ԼՂ բռնի տեղահանված անձինք՝ անկախ ՀՀ քաղաքացի դառնալու հանգամանքից.....2
Ա. Իրավական հիմքը.....2
Բ. Պետական նպաստի իրավունք ունեցող անձինք.....2
Գ. Պետական նպաստի տեսակները.....3
Դ. Պետական նպաստի տրամադրումը.....6
Ե. Պետական նպաստի մերժման հիմքերը..... 6
2. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ.....8
Ա. Իրավական հիմքը.....8
Բ. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեցող անձինք.....8
Գ. Կիրառվող հասկացությունները.....9
Դ. Նպաստի չափը. 11
Ե. Տրամադրման կարգը. 12
3. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ (ներկայացվում է 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո ծնված երեխաների մասով). 15
Ա. Իրավական հիմքը. 15
Բ. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունեցող անձինք. 15
Գ. Կիրառվող հասկացությունները.....17
Դ. Խնամքի նպաստ նշանակման և վճարման կարգը.....19
Ե. Խնամքի նպաստ նշանակման մերժման հիմքերը. 21
Զ. Խնամքի նպաստ վճարման եղանակները. 22
Է. Խնամքի նպաստի չափը.....23
Ը. Դադարեցման հիմքերը. 24

ԼՂ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

1. Պետական նպաստներ, որոնցից կարող են օգտվել ԼՂ բռնի տեղահանված անձինք՝ անկախ ՀՀ քաղաքացի դառնալու հանգամանքից.

Ա. Իրավական հիմքը.

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք), որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ մտել՝ 2024 թվականի հունվարի 1-ին:

Բ. Պետական նպաստի իրավունք ունեցող անձինք.

Օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում (օրինակ՝ երեխայի ծնունդ, հաշմանդամություն, ժամանակավոր անաշխատունակություն և այլն) պետական նպաստի իրավունք ունեն.

- ✓ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,
- ✓ Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները,
- ✓ քաղաքացիություն չունեցող,
- ✓ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք:
- ✓ Այսինքն՝ ԼՂ բռնի տեղահանված անձինք համապատասխան հիմքերի առկայության դեպքում ևս

պետական նպաստի իրավունք ունեն՝ անկախ ՀՀ քաղաքացիություն ունենալու հանգամանքից:

Գ. Պետական նպաստի տեսակները.

Օրենքով սահմանվում են պետական նպաստների հետևյալ տեսակները.

- **ընտանեկան նպաստը** *(ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից),*
- **սոցիալական նպաստը** *(սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ չունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից),*
- **հրատապ օգնությունը,** *(հրատապ օգնության տեսակներն են՝ (1) միանվագ հրատապ օգնությունը և (2) եռամսյակային հրատապ օգնությունը: Միանվագ հրատապ օգնությունը տրամադրվում է (1) ընտանիքում երեխայի ծննդյան դեպքում, (2) ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում և (3) ընտանիքի անդամի մահվան դեպքում: Եռամսյակային հրատապ օգնությունը տրամադրվում է անհետաձգելի լուծում պահանջող կյանքի*

դժվարին իրավիճակում: Եռամսյակային հրատապ օգնության իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք չունեցող անապահովության «0» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքն անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում (արտակարգ իրավիճակների և կարճատև ֆինանսական խնդիրներ ունենալու) հայտնվելու դեպքում),

- **երեխայի ծննդյան միանվագ նպաստը** *(առավել մանրամասն տե՛ս 2.4.2. կետում),*
- **մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը** *(առավել մանրամասն տե՛ս 2.4.3. կետում),*
- **ժամանակավոր անաշխատունակության նպաստը** *(ժամանակավոր անաշխատունակության նպաստի միջոցով մասնակիորեն փոխհատուցվում է օրենքով սահմանված անձանց ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ, առավել մանրամասն կարգավորումները տե՛ս «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքում),*
- **մայրության նպաստը** *(մայրության նպաստի իրավունք ունեն (1) գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք, բացառությամբ 3-րդ կետով սահմանված վարձու աշխատողի, (2) անհատ ձեռնարկատերերը և նոտարները, (3) Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի*

առաջին օրվա դրությամբ վարձու աշխատող կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ չհանդիսացող անձը),

- **ծերության նպաստը** *(ծերության նպաստի իրավունք ունի կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող անձը՝ 65 տարին լրանալու դեպքում),*
- **հաշմանդամության նպաստը** *(հաշմանդամության նպաստը նշանակվում է կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող հաշմանդամություն ունեցող անձին, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխա ճանաչված անձին),*
- **կերակրողին կորցնելու դեպքում նպաստը** *(կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունի մահացած կերակրողի՝ կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող (1) 18 տարին չլրացած երեխան՝ մինչև 18 տարին լրանալը, (2) առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակը՝ մինչև 26 տարին լրանալը, (3) ամուսինը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ եթե նա զբաղված է մահացած կերակրողի 14 տարին չլրացած՝ նպաստի իրավունք ունեցող երեխայի խնամքով, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում),*
- **թաղման նպաստը** *(նպաստառուի մահվան դեպքում կամ հաշմանդամության նպաստի իրավունք ունեցող անձի ֆունկցիոնալության կրկնակի գնահատման ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկնակի գնահատման չներկայանալու և մահանալու դեպքում կամ այդ ժամկետում կրկնակի գնահատման ներկայանալու կամ վերագնահատման համար դիմելու, սակայն մինչև իր վերաբերյալ ֆունկցիոնալության*

գնահատման որոշում կայացվելը մահանալու դեպքում այդ անձի հուղարկավորությունը կատարած անձին նշանակվում և վճարվում է թաղման նպաստ),

- **խնամակալության նպաստը** *(խնամակալության նպաստ ստանալու իրավունք ունի 14 չլրացած անչափահասների նկատմամբ խնամակալ նշանակված անձը, որը հաշվառված է խնամակալության նպաստի համակարգում: Խնամակալ նշանակված անձին հաշվառում են խնամակալության նպաստի համակարգում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափորոշիչներին համապատասխան):*

Դ. Պետական նպաստի տրամադրումը.

Պետական նպաստ ստանալու համար անձը **դիմում է** իր բնակության վայրի՝ պետական նպաստ տրամադրելու Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն (այսուհետ՝ տարածքային կենտրոն): Անհրաժեշտ տեղեկությունները հասանելի են հետևյալ հղումով՝ https://socservice.am/offices:

Դիմողը տարածքային կենտրոնում հայտարարագրում է պետական նպաստի տվյալ տեսակի համար անհրաժեշտ տվյալները և ներկայացնում պահանջվող փաստաթղթերը:

Ե. Պետական նպաստի մերժման հիմքերը.

Պետական նպաստի նշանակումը մերժվում է՝

1) պետական նպաստի տվյալ տեսակի նշանակման համար օրենքով սահմանված հիմք(եր)ի բացակայության դեպքում, *օրինակ՝ ԼՂ բռնի տեղահանված անձը դիմել է*

ծերության նպաստ ստանալու խնդրանքով այն դեպքում, երբ վերջինս կենսաթոշակ ստանալու իրավունք ունի:

2) դիմողի կողմից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն օրենքով պետական նպաստի տվյալ տեսակի նշանակման համար սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում, *օրինակ՝ ԷՂ բռնի տեղահանված անձի երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնությունը նշանակվում է,* ***եթե ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմել է երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու տարվա օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների ընթացքում,*** *և ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստ ստանալու իրավունք, հետևաբար՝ սահմանված ժամկետում դիմում չներկայացնելը հիմք է դիմումը մերժելու համար:*

3) պետական նպաստ ստանալու համար դիմողի կողմից ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու դեպքերում:

2. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ.

Ա. Իրավական հիմքը.

- «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (2-րդ հոդվածի 1-ին մաս, 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, 6-րդ հոդվածի 4-րդ մասը, 6-րդ գլուխը),
- ՀՀ կառավարության՝ «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշումը:

Բ. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեցող անձինք

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեն երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը, այսուհետ՝ նոր ծնված երեխա) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող):

Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է, ***եթե ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,*** **հետևաբար՝**

ԼՂ բռնի տեղահանված անձինք, անկախ ՀՀ քաղաքացիություն ունենալու հանգամանքից, սույն դեպքում ՀՀ-ում հաշվառում ունենալու պայմանով կարող են ստանալ խնդրո առարկա նպաստը

Նոր ծնված երեխայի ծննդի պետական ***գրանցումն օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից իրականացված լինելու դեպքում*** երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակվում և վճարվում է ծնողին, եթե՝

1) ծնողը և նոր ծնված երեխան **հաշվառված** են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով.

2) ծնողը և նոր ծնված երեխան **դիմելու օրվա դրությամբ գտնվում են** Հայաստանի Հանրապետությունում:

Օտարերկրյա քաղաքացի ծնողին երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է, եթե՝

1) նոր ծնված երեխան **հաշվառված է** Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով.

2) ծնողը և նոր ծնված երեխան **դիմելու օրվա դրությամբ գտնվում** են Հայաստանի Հանրապետությունում.

3) նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ ծնողն **առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված է** Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով.

4) օտարերկրյա պետությունում **երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չի նշանակվել** (վճարվել):

Գ. Կիրառվող հասկացությունները.

Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունների շրջանակներում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

➢ **նոր ծնված երեխա՝** երեխա, ում ծննդյան կապակցությամբ ծագել է նպաստ ստանալու իրավունքը.

- **զավակ՝** նոր ծնված երեխայի 18 տարին լրացած քույր կամ եղբայր, այդ թվում՝ համամայր կամ համահայր.
- **դիմող՝** ծնողի անունից նպաստը նշանակելու և վճարելու դիմում ներկայացրած անձ.
- **ծնող՝** նոր ծնված երեխայի հայրը կամ մայրը, ումից սերված լինելու փաստը հաստատված է (որոշված է) օրենքով սահմանված կարգով և ով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել է նպաստը նշանակելու դիմում, նոր ծնված երեխայի խնամակալ կամ որդեգրող.
- **տարածքային բաժին՝** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) համապատասխան ստորաբաժանում.
- **անձը հաստատող փաստաթուղթ՝**

ա. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (այդ թվում՝ երկքաղաքացիների) համար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտը, իսկ մինչև 16 տարեկանների դեպքում՝ անձնագիրը, ծննդյան վկայականը,

բ. օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օրենքով կամ միջազգային պայմանագրով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը (կացության կարգավիճակը) հաստատող փաստաթուղթը,

գ. փախստականի կարգավիճակ ունեցող անձի համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը,

դ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ ժամա-

նակավոր պաշտպանության տակ վերցված՝ փախստական ճանաչված անձանց (այսուհետ՝ ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստական) համար՝ անձնագիրը (որն իր նկարագրով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ հաստատված անձնագրի նկարագրին, սակայն ծածկագիրը տպագրվում է (կամ տպագրված է) բացառապես 070 ծածկագրով) կամ ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականը, իսկ մինչև 16 տարեկանների դեպքում՝ անձնագիրը, ծննդյան վկայականը (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի իրավասու մարմնի կողմից տրված), ընդ որում՝ նշված անձինք նույնականացվում են՝ ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի տվյալների:

Դ. Նպաստի չափը.

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը, ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվ, կազմում է.

ա. առաջին երեխայի ծնվելու դեպքում՝ 300.000 դրամ,

բ. երկրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 300.000 դրամ,

գ. երրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 1.000.000 դրամ,

դ. չորրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 1.000.000 դրամ,

ե. հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 1.500.000 դրամ.

Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ պետական աջակցության հաշվին մուտքագրվող չափը՝

ա. երրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 500.000 դրամ,

բ. չորրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 500.000 դրամ,

գ. հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 1.000.000 դրամ:

Ե. Տրամադրման կարգը.

Նպաստ նշանակելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում, ընդ որում՝ այն կարող է ներկայացվել ինչպես **անձամբ՝** ծնողի կողմից կամ այլ անձի միջոցով տարածքային բաժին դիմումի ներկայացնելու, այնպես էլ **առցանց եղանակով**:

- **Ծնողի կողմից անձամբ կամ այլ անձի միջոցով տարածքային բաժին դիմում ներկայացնելը.**

Նպաստը նշանակելու համար **ծնողն անձամբ կամ այլ անձի միջոցով տարածքային բաժին է ներկայացնում դիմում,** որում ներառվում են՝

ա. դիմողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, ծնողի բնակության (հաշվառման) վայրի հասցեն, ծնողի էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը (առկայության դեպքում), անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը, հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, եթե ծնողը հրաժարվել է հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց,

բ. նոր ծնված երեխայի կարգաթիվը (միաժամանակ մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում՝ նոր ծնված երեխաների թիվը և ընտանիքում երեխաների թիվը), անունը, ազգանունը, ծննդյան վկայականի սերիան և համարը, բնակության (հաշվառման) վայրի հասցեն (բացառությամբ այն դեպքի, երբ նոր ծնված երեխան մահացել է), հանրային

ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, եթե ծնողը հրաժարվել է երեխայի հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց),

գ. այն բանկի անվանումը, որտեղից ծնողը (սույն կարգով սահմանված դեպքում՝ նրա լիազորած անձը) ցանկանում է ստանալ նպաստի գումարը,

դ. նշում այն մասին, որ դիմողը տեղեկացված է, որ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12 ամսվա ընթացքում, նպաստի գումարը մասնակի կամ ամբողջությամբ ստանալու պահանջ բանկին չներկայացնելու դեպքում նպաստի գումարը վերադարձվում է պետական բյուջե, և կարող է կրկին վճարվել պետական բյուջե վերադարձվելու ամսվան հաջորդող երեք տարվա ընթացքում կրկին դիմելու դեպքում,

ե. եթե դիմումը ներկայացվում է ընտանիքում երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող նպաստի համար, ապա նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնվող երեխայի (զավակի) անունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդյան վկայականի սերիան և համարը, ծննդյան վկայականը հատկացնելու օրը, ամիսը, տարեթիվը, մինչև նոր ծնված երեխայի ծննդյան օրը մահացած երեխաների (զավակների) մահվան վկայականի սերիան և համարը:

- **Ծնողի կողմից առցանց դիմում ներկայացնելը.**

Նպաստը նշանակվում (վճարվում) է **նաև առցանց ներկայացված** տեղեկատվության հիման վրա՝ **բացառությամբ այն դեպքերի**, երբ

1) նպաստը նշանակվում է օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ծնողին կամ՝

2) նոր ծնված երեխայի կամ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնվող երեխայի ծննդի պետական գրանցումը կատարել է օտարերկրյա պետության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը կամ՝

3) նոր ծնված երեխան մահացել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի N 949-Ն որոշմամբ սահմանված պերինատալ շրջանում, և ծննդի պետական գրանցում չի կատարվել:

Առցանց դիմում հնարավոր է ներկայացնել https://online.ssa.am/ կայքում՝ հետևելով հրահանգներին

3. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ (ներկայացվում է 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո ծնված երեխաների մասով).

Ա. Իրավական հիմքը.

- «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (2-րդ հոդվածի 1-ին մաս, 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ, 6-րդ հոդվածի 4-րդ մասը, 7.1-ին գլուխը),
- ՀՀ կառավարության՝ «Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշումը (ներկայացվում է սույն որոշման մեջ ՀՀ կառավարության՝ 2024 թվականի փետրվարի 29-ի N 276-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ կատարելու որոշմամբ սահմանված կարգավորումների ներառմամբ):

Բ. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունեցող անձինք.

Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի (այսուհետ՝ խնամքի նպաստ) իրավունք ունի երեխայի ծնողներից մեկը կամ որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող), եթե՝

1) երեխան **չունի առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ,** բացառությամբ երեխայի խնամակալի (երբ խնամքի նպաստ նշանակվում է երեխայի խնամակալին).

2) երեխան չի գտնվում բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը).

3) լրացել է երեխայի 70 օրականը, սակայն չի լրացել երեխայի երկու տարեկանը:

Օտարերկրյա քաղաքացի ծնողն ունի խնամքի նպաստի իրավունք, եթե բավարարում է սահմանված պայմանները, *և երեխայի ծննդյան օրվա դրությամբ ծնողն առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:*

Եթե ծնողը խնամքի տակ ունի մեկից ավելի մինչև երկու տարեկան երեխա, ապա խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է յուրաքանչյուր երեխայի համար:

Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ **գյուղական բնակավայրի հասցեով հաշվառված և փաստացի բնակվող, խնամքի արձակուրդում գտնվող ծնողին խնամքի նպաստը վճարվում է**, եթե վճարելու ամսվա 1-ի դրությամբ՝

1) առնվազն մեկ տարի անընդմեջ ծնողը հաշվառված է գյուղական բնակավայրի հասցեով, և

2) երեխան հաշվառված է գյուղական բնակավայրի հասցեով:

Խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է (ծնողը խնամքի նպաստ ստանալու իրավունք է ձեռք բերում), եթե

- *ծնողը և երեխան Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում* ***հաշվառված են*** *Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով, և*

- երեխան գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Ըստ այդմ՝ ԼՂ բռնի տեղահանված անձինք ևս կարող են ստանալ նշված նպաստը, եթե բավարարում են հիշատակված պահանջները՝ անկախ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հանգամանքից

Գ. Կիրառվող հասկացությունները.

Խնամքի նպաստը նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունների շրջանակներում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

1) **դիմող՝** խնամքի նպաստը նշանակելու և վճարելու դիմում ներկայացրած անձ.

2) **ծնող՝** 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծնված երեխաների դեպքում՝ երեխայի ծնողներից մեկը կամ որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող), եթե՝

1) երեխան չունի առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ, բացառությամբ երեխայի խնամակալի (երբ խնամքի նպաստ նշանակվում է երեխայի խնամակալին).

2) երեխան չի գտնվում բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը).

3) լրացել է երեխայի 70 օրականը, սակայն չի լրացել երեխայի երկու տարեկանը:

2.1) **խնամքի արձակուրդում գտնվող ծնող՝** Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում (այսուհետ՝ խնամքի արձակուրդ) գտնվող ծնող, ում օրենքով սահմանված կարգով նշանակվում և վճարվում է խնամքի նպաստը.

2.2) **գյուղական բնակավայրում բնակվող ծնող կամ գյուղաբնակ ծնող՝** Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով սահմանված՝ գյուղական բնակավայրի (կարող ես ծանոթանալ բնակավայրերի, այդ թվում՝ գյուղական բնակավայրերի ցանկին՝ այստեղ) հասցեով հաշվառված և փաստացի բնակվող ծնող, ում օրենքով սահմանված կարգով նշանակվում և վճարվում է խնամքի նպաստը.

3) **տարածքային բաժին՝** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) տարածքային համապատասխան կենտրոն.

4) **երեխա՝** երկու տարին չլրացած երեխա, ում խնամքի կապակցությամբ ծնողը ձեռք է բերում խնամքի նպաստի իրավունք.

5) **անձը հաստատող փաստաթուղթ՝**

ա. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (այդ թվում՝ երկքաղաքացիների) համար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտը, իսկ մինչև 16 տարեկանների դեպքում՝ նաև ծննդյան վկայականը,

բ. օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օրենքով կամ միջազգային պայմանագրով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը (կացության կարգավիճակը) հաստատող փաստաթուղթը,

գ. փախստականի կարգավիճակ ունեցող անձի համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը,

դ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ ժամանակավոր պաշտպանության տակ վերցված՝ փախստական ճանաչված անձանց (այսուհետ՝ ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստական) համար՝ անձնագիրը (որն իր նկարագրով համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ հաստատված անձնագրի նկարագրին, սակայն ծածկագիրը տպագրվում է (կամ տպագրված է) բացառապես 070 ծածկագրով) կամ ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականը.

Դ. Խնամքի նպաստ նշանակման և վճարման կարգը.

Խնամքի նպաստ նշանակելու դիմումը կարող է ներկայացվել ինչպես անձամբ, այնպես էլ առցանց տարբերակով:

Խնամքի նպաստը նշանակելու համար **դիմումը** և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած **անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները)** ներկայացվում են տարածքային կենտրոն, մասնավորապես՝

- դիմում,

- դիմողի (եթե դիմողը ծնողը չէ) անձը հաստատող փաստաթուղթը,
- ծնողի անձը հաստատող փաստաթուղթը, հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը, եթե ծնողը հրաժարվել է հանրային ծառայությունների համարանիշ ստանալուց,
- երեխայի ծննդյան վկայականը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը,
- անհրաժեշտության դեպքում՝ խնամակալության մասին փաստաթուղթը,
- ծնողի կողմից ստորագրված հայտարարությունը՝ խնամքի արձակուրդն ավարտվելու (արձակուրդն ընդհատվելու, աշխատանքի անցնելու կամ աշխատանքից ազատվելու) դեպքում և օրենքով սահմանված այլ դեպքերում խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարելու վերաբերյալ տեղեկացված լինելու մասին,
- ծնողին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում ծնողի՝ խնամքի արձակուրդում գտնվելու մասին գործատուի տված տեղեկանքը (ստորագրված և կնքված գործատուի կնիքով),
- անհրաժեշտության դեպքում՝ խնամքի նպաստը կանխիկ եղանակով դիմողին վճարելու վերաբերյալ նոտարական կարգով վավերացված՝ ծնողի տված լիազորագիրը:

Խնամքի նպաստը նշանակվում է՝

1) երեխայի 70 օրականը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից (բայց խնամքի նպաստի իրավունք ձեռք բերելու ամսվա 1-ից ոչ շուտ), եթե դիմումն ու անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) ներկայացվել են երեխայի 70 օրականը լրանալու ամսվան հաջորդող տասներկու ամսվա ընթացքում.

2) դիմելու ամսվա 1-ից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) ներկայացվել են նշված տասներկուամսյա ժամկետը լրանալուց հետո:

Առցանց դիմում հնարավոր է ներկայացնել https://online.ssa.am/ կայքում՝ հետևելով հրահանգներին

Ե. Խնամքի նպաստ նշանակման մերժման հիմքերը.

Տարածքային կենտրոնը մերժում է խնամքի նպաստ նշանակելը, եթե՝

1) ծնողը չունի խնամքի նպաստի իրավունք կամ

2) չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) կամ

3) ծնողը կամ երեխան հաշվառված չէ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով կամ

4) երեխան չի գտնվում Հայաստանի Հանրապետությունում կամ

5) տվյալ երեխայի խնամքի կապակցությամբ նշանակվել է խնամքի նպաստ, և խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցված չէ:

Զ. Խնամքի նպաստ վճարման եղանակները.

- *Խնամքի նպաստի վճարման անկանխիկ եղանակ.*

Որպես ընդհանուր կարգ՝ նախատեսված է խնամքի նպաստի վճարման անկանխիկ եղանակը։

Յուրաքանչյուր ամսվա խնամքի նպաստը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում՝ **անկանխիկ եղանակով:**

- *Խնամքի նպաստի վճարման կանխիկ եղանակը.*

Եթե ծնողը ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ է, ապա խնամքի նպաստը կարող է վճարվել **կանխիկ եղանակով՝ ծնողի դիմումի հիման վրա:**

Ընդ որում՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված լինելու մասին անձին տրված տեղեկանքներով (վարչական ակտերի քաղվածքներով), **այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղում տրված՝**

1) «1-ին խմբի հաշմանդամ անձ» կարգավիճակը հավասարեցվում է անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված «ֆունկցիոնա-

լության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ» կարգավիճակին.

2) «2-րդ խմբի հաշմանդամ անձ» կարգավիճակը հավասարեցվում է անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված «ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ» կարգավիճակին

Խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարելը գումարի տրամադրումն է անձամբ ծնողին կամ նրա փոխարեն խնամքի նպաստը ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին:

Խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարվում է նաև ծնողի տված և նոտարի վավերացրած լիազորագրով, եթե լիազորագրով խնամքի նպաստը վճարելու մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են տարածքային բաժին:

Խնամքի նպաստը լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածում՝ սկսած խնամքի նպաստը լիազորագրով վճարելու ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով խնամքի նպաստ չի վճարվում:

Է. Խնամքի նպաստի չափը.

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը կազմում է.

ա. եթե ծնողը չի գտնվում խնամքի արձակուրդում (նախընտրում է գնալ աշխատանքի)՝ 31.600 դրամ,

բ. եթե ծնողը գտնվում է խնամքի արձակուրդում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ

օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի 50 տոկոսի չափով, տվյալ դեպքում՝ 37.500 դրամ,

գ. խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնողի համար՝ 69.100 դրամ:

Ը. Դադարեցման հիմքերը.

Խնամքի նպաստ **ստանալու իրավունքը դադարում է՝**

1) երեխայի երկու տարեկանը լրանալու դեպքում.

2) երեխայի՝ բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպություն ընդունվելու կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում.

3) անձին Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ խնամքի նպաստ նշանակված լինելու դեպքում.

4) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ երեխայի կամ ծնողի՝ օտարերկրյա պետության բնակության վայրի հասցեով հաշվառվելու դեպքում.

5) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ծնողի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու դեպքում.

6) օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող կամ փախստականի կարգավիճակ ունեցող ծնողի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու կամ բնակվելու իրավունքը դադարելու կամ Հայաստանի Հանրապետության **բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու դեպքում.**

7) երեխայի կամ ծնողի մահվան դեպքում.

Այս դեպքում երեխայի մյուս ծնողին կարող է նշանակվում է խնամքի նպաստ, եթե այդ ծնողն ունի խնամքի նպաստի

իրավունք: Նշանակված, սակայն ծնողի մահվան պատճառով չվճարված խնամքի նպաստի գումարը վճար-վում է երեխայի օրինական ներկայացուցչին (ծնողին, խնամակալին, որդեգրողին), եթե խնամքի նպաստն ստանալու համար երեխայի օրինական ներկայացուցիչը ***դիմել է*** *խնամքի նպաստի իրավունք ունեցող ծնողի մահվանից հետո՝* ***վեց ամսվա ընթացքում****:*

Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում ծնողի մահվան պատճառով չվճարված խնամքի նպաստի գումարը ենթակա է ժառանգման:

8) երեխայի՝ Հայաստանի Հանրապետությունից անընդմեջ տասներկու ամիս և ավելի ժամկետով բացակայելու դեպքում.

9) ծնողի՝ խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը տարածքային բաժին ներկայացնելու կամ այդ գրավոր հայտարարությունը տարածքային բաժնում տալու դեպքում:

Խնամքի նպաստ **վճարելը դադարեցվում է՝**

1) ծնողի՝ խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարելու դեպքում՝ խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարելու օրվանից.

2) խնամքի նպաստը լիազորագրով վճարվելու դեպքում (ներկայացվել է խնամքի նպաստը լիազորագրով վճարելու դիմում)՝ լիազորագրի գործողության ժամկետը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից կամ լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվանից հետո՝ այդ ժամկետը լրանալու օրվան հաջորդող ամսվա 1-ից.

3) ծնողին կամ նրա լիազորած անձին տասներկու ամիս անընդմեջ խնամքի նպաստ չվճարելու դեպքում՝

տասներկուերորդ ամիսը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Վերջին երկու դեպքում խնամքի նպաստ վճարելը վերսկսելու դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու հաջորդ ամսվա 1-ից:

Չվճարված խնամքի նպաստի գումարը վճարվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա խնամքի նպաստի գումարի հետ մինչև խնամքի նպաստ վճարելը դադարեցնելը:

Եթե խնամքի նպաստ վճարելը դադարեցվել է, ապա չվճարված խնամքի նպաստի գումարը վճարվում է դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող ամբողջ ժամանակահատվածի այն ամիսների համար, որոնց ընթացքում անձն ունեցել է խնամքի նպաստ ստանալու իրավունք: Խնամքի նպաստ վճարելը վերսկսելու դեպքում չվճարված խնամքի նպաստի գումարը (այդ թվում՝ դիմելու ամսվա խնամքի նպաստի գումարը) վճարվում է միանվագ:

Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո չվճարված խնամքի նպաստի գումարը վճարվում է ծնողի դիմումի հիման վրա, դիմումը *մինչև երեխայի երեք տարեկանը լրանալը ներկայացնելու դեպքում՝ անկանխիկ եղանակով, դիմելու ամսվան հաջորդող ամսվա ընթացքում:*